

Թերճէմանը հաքիքաթն ամենէն պաղն է: Վիքթօր Հիւկօն, կ'ըսէ, Քիւրդերէն դաս առնելու կարօտ է դեռ... Քիւրդերն աշխարհիս ամենէն աւելի լուսաւորեալ ազգերէն մին կը կազմեն եղեր: Լաթակա՞զմ թէ թղթակազմ:

Չղային հիւանդութեան ենթակայ մին՝ եթէ *տուշ* ընելու տեղ գլխէն վար քանի մը *Թերճիման հաքիքաթի* թերթերէն թափէ՝ կարծենք մեծ օգուտ կգտնէ:

30 Յունիս

Քաղաքապետութիւնն թատերական ընկերութիւններէ ամիսը հինգ ոսկի տուրք պիտի առնէ: Այդ ընկերութիւնները Թուրքիոյ մէջ ոչնչացնելու համար լաւագոյն ճամբայ մը չէր կարող գտնել քաղաքապետութիւնը:

Տուրք մ'ալ թատրոն գնացողներէն առնելու է՝ որ թատրոն չերթան:

**

Գերմանական դեսպան Հացֆէլտ կոմսն այսօր Բ. Դրան պիտի ներկայացնէ դեսպանախորհրդին ծանուցագիրն:

Քաղաքապետութիւնն ծանուցագիրներուն վրայ տուրք մը դնելու է՝ որ իսալսինք անոնց ձեռքէն...:

1 Յուլիս

Անաքսաքորաս կ'ըսէ, թէ բնութեան մէջ դատարկութիւն չկայ:

Ես կ'ըսեմ, թէ բնութեան մէջ դատարկութիւն կայ:

Մի կարծէք թէ հակառակ խօսած ըլլալու համար Անաքսաքորասի կարծիքը չեմ ընդունիր. երեսփոխան չեմ, փառք Աստուծոյ:

Այո՛, պարոններ, Անաքսաքորասի կարծիքէն չեմ... եւ Անաքսաքորաս ալ վշտանալու չէ. վասն զի Անաքսաքորաս գիտնալու է, թէ Անաքսաքորասի դարն անցած է, թէ Անաքսաքորասին մտիկ ընող չկայ եւ թէ ամեն մարդ Անաքսաքորասի պէս իրաւունք ունի իւր կարծիքը յայտնելու: Կարծիքներն շատ ազատ են այժմ, եւ իւրաքանչիւր ոք իրաւունք ունի այսօր առանց կարմրելու սեւին ճերմակ եւ ճերմակին սեւ ըսելու: Ես ալ կը վայելեմ այդ իրաւունքը, բայց խղճմտանքի տէր ըլլալով՝ կը կոչեմ անձերն եւ իրերն այնպէս՝ ինչպէս որ կ'երեւին ինձ. եւ եթէ այս անձերն եւ իրերն չեն երեւիր ինձ այնպէս ինչպէս որ են՝ յանցանքն իմս չէ: